

խնդիրքդ այսպիսի սրտաշարժ վայրկենի մէջ վրաս մեծ աղղեցութիւն ըրաւ, և անցած գացած դէպքերուն ահաւոր պատկերքը աչքիս դիմացը ներկայացուց, այն յեղափոխութիւնը կ'ըսեմ, երբ ամբողջ տէրութիւն մը անաստուածութիւն կը քարոզէր: Ուրեմն ինչպէս որ առաջ երդուընցուցիր զիս այս մօրէ որը տղաքները քրիստոնեայ ընելու, հիմա ասոր համար կը խնդրեմ քուկին ձեռնտութիւնդ, որպէս զի առաջադրութիւնս լաւ վախճան մը ունենայ: Ես երդմամբ կ'ուխտեմ ամեն ջանքս ընելու որ նպատակիս համնիմ. վկայ ըլլայ այս սուրբ խաչը, զոր մայրերէն լաւագոյնը իր անշնչացած ձեռքին մէջ բռներ է. որուն վրայ ձեռքս զնելով՝ կը խոստանամ քեզի ՚ի կատար հասցնել այս ըրած ուխտու:

Այս միջոցին երկուքին ալ սիրտը զգացուելով իրարու պլլուեցան, և այն պէս աղնուական դաշինք մը հաստատեցին մօրէ որը մնացած տղոց դաստիարակութեանը համար:

Կը շարումակուի:

ԱՆԱԳԱՊՂԻՆՁ

Յատկորիւնները. — Ծագումը. — Հնոց անագապղինձ արձանները. — Վանուու հրապարակին կորողը. — Անագապղինձ արձանաց շինորեանը համար կարևոր պայմաններ. — Թեղանօրից և զանգակաց անագապղինձը:

Սովորաբար պղնձի և անազի, երբեմն ալ ուրիշ զանազան մետաղաց, այսինքն՝ երկաթոյ, զինկոյ և կապարոյ բաղադրութիւնը անագապղինձ կ'ըսուի: Հինք անագապղինձը շատ տեսակ բանի կը գործածէին, բայց նշանաւորն է իրենց զիւցազանց և երևելի արանց անունները, և դարձեալ իրենց նշանաւոր գործերը յաւերժական հրաշակերտներով ապագայից աւանդել:

Անագապղինձը՝ շատ աւելի կարծր է քան զարոյը՝ հատու գործեաց շինու-

թեանը գործածուած է. դարձեալ անկէ կը շինէին զրամ, ծնծղայ, արձան, թնդանօթ, զանգակ և ուրիշ ասոնց նման բաներ:

Անագապղինձ ձուկելու արուեստը ամենահին է: Արիստոտէլ՝ Ստիլոս լիւդացւոյն կ'ընծայէ ասոր գիւտը, թէովրաստ ալ Տելաս Փոխագացւոյն. իսկ արձանաց ձուլումը, որով սկսաւ արուեստս դէպ՚ի կատարելագործութիւն դիմել՝ թէոդորի և Ռէքոս Սամոսացւոյն կ'ընծայուի, որոնք Քրիստոսէ 700 տարի առաջ էին:

Պ. Բէարսըն, նիզակներ և ուրիշ կելտական հատու գործիներ վերլուծածու մէջերնին 100ին 40—44 անագ գտած է: Յետագայ տեղեկութիւններով կը նայ հասկըցուիլ այս տեսակ զինուց շինութիւնը:

Ա. Թէ որ կարմրացնենք անագապղինձը կրակի մէջ, և ապա ցուրտ ջրոյ մէջ միսենք, այնպէս կը կակղանայ, որ ինչուան ճախարակի վրայ կրնանք բանիլ զայն, մրճոյ տակ ընդլայնել, խարտոցով յդկել, քարով ալ ողորկել:

Բ. Անագապղինձը թէ որ մինչև ցըկարմիր տաքցնելու ըլլանք, և օդոյ մէջ պաղեցնենք, կը պնդանայ և կը կարձրանայ, բայց դիւրաբեկ կ'ըլլայ: Հաւանական է որ գործաւորք իրենց աշխատութիւնը լմնցնելու համար, ջրով կակղացած անագապղինձին կտորները դարձեալ կը տաքցնէին, օդոյ մէջ կը պաղեցնէին, և անոր պէտք եղած պնդութիւնը կու տային:

Հինք շատ պղնձէ արձաններ շինածեն. Հերքուլանոնի մէջ, որ Քրիստոսէ 300 տարի առաջ էր, գտնուած անթիւ անհամար պղնձէ գործերը և ուրիշ ամենագեղեցիկ քանդակներ՝ հաւաստիք են ըսածներնուս: Բայց քաղաքիս պեղածոյ հնութեանց մէջէն իրեւ յիշատակաց արժանի՝ կրնանք անուանելնախ այն ոսկէզօծեալ անագապղինձէ ձիոց և կառքի բեկորները՝ որք կը պըճնէին Արամաղղայ մեհենին մօտ եղած թէատրոնին զիսաւոր գուռը, և Փորոնի որմերուն վրայ ներոնի և Գերմանիկոսի

արձանները։ Խակ Բորդիշի թանգարանին պղնձաձոյլ արձաննաց բազմութիւնը՝ որք Հերքուլանոն, Պոմպէա և Սդապէա քաղաքաց պեղմունքէն են, բովանդակ Եւրոպիոյ մէջ գտնուածներէն աւելի է։

Մեծութեան կողմանէ եղած անգապղինձ գործուածոց մէջէն նշանաւորներէն մէկն ալ է՝ վանտոմ հրապարակին կոթողը, որ ձուլեցաւ Աւստրլից պատերազմին թնդանօթից անագապղինձներէն, և կանգնեցաւ ՚ի պատիւ Գաղղիական բանակին. կոթողին բարձրութիւնն է եօթանասուն և հինգ մետր, Նարուէոնի արձանին բարձրութիւնն ալ մէկտեղ հաշուելով, խակ կշռոն է 9,000,000 հազարակրամ։

Անագապղնձէ արձանաց շինութեան համար հարկ է որ բաղադրութիւնը լոյծ ըլլայ, որպէս զի կարենայ զիւրաւ մտնել կաղապարին ամեն մասանցը մէջ, անոր ամեն ձև տալ, և մակերեսոյ թը միապաղաղ ընել։ Կարեւոր է դարձեալ ամեն բանէ աւելի որ անագապղինձը սաստիկ կարծր ըլլայ, զի որպէս կարենայ որ և իցէ բախմանց ընդդիմանալ անագապղնձէ գործուածը. Հարկաւոր է դարձեալ որ այս բաղադրութիւնը զիւրաւ չխանգարի տեսակ տեսակ բնական պատճառաց ներգործութենէն՝ որոց միշտ ենթակայ է։

Անագապղինձը թնդանօթից շինութեան ալ կը գործածուի։ Թնդանօթից անագապղնձին բաղադրութեան համեմատական չափն է հարիւր մասն պղինձ և մետասան մասն անագ. Եթէ փոխանակ մետասան մասն անագի՝ գործածուի երկոտասան կամ երեքտասան մասն, բաղադրութիւնը կարծր կ'ըլլայ և զիւրաբեկ. Խակ թէ որ նուազ քան զմետասան մասն անագի՝ բաղադրութիւնը սաստիկ կակուղ կ'ըլլայ։

Զանգակաց անագապղնձին բաղադրութիւնն է պղինձ, անագ, զինկ, կապար, երկաթ, պիսմութ և արծաթ, այլ և այլ չափով։ Զանգակաց, մանաւանդ մեծ զանգակաց բաղկացութեան մէջ ամենակարեւոր համարուած է ար-

ծաթոյ գործածութիւնը, ձայնի պայծառութեան և մաքրութեան համար։

ԿԵՆՍՍ.ԳՐՈՒԹԻՒՆ

ՎԻԿՏՈՐ ԼԱՆԿՈՒՄ.ՑԻ

Այս տարի մայիսի 14^{եւ} զրաւեցաւ ՚ի կենաց երեւելի հայագէտ և արեւելագէտ անձ մը, Վիկտոր Լանկում, որ ծնաւ Գաղղիոյ Տիեփ քաղաքը 1829, մարտ 20, առաջին կայսերութեան քաջ և երեւելի սպաներէն միոյն որդի։ Բնութեամբ քաղցր և գիւրամատոյց, մոօք զօրաւոր և թափանցող, ձեռներէց ՚ի մեծամեծս և յաջողութեամբ կատարող, անձ մը որ ամենուն սիրելի և ոչ ումեք թշնամի։ Այս ամեն անձնական կատարելութեանց վկայ են անոնք, ոյք կենակից եղած են իրեն հետ, ինչպէս մեր Միաբանութեան անձանցմէ բազումք։

Վիկտոր Լանկուայի մեծագոյն համբաւը ոչ եթէ աշխարհական գործոց մէջ էր, այլ զրականութեան սասպարիզին մէջ, մանաւանդ արեւելեան զիւտութեանց հմտութեամբը, ուր քան զբազում համազգայինս իւր քաջ հանդիսացաւ, և անուն մեծ թողուց թէ գաղղիոյ և թէ այն արեւելեան ազգաց մէջ, ուր անձամբ պտղտեցաւ և զրեց անոնց վրայ։ Ամեն արեւելեան կործանեալ և հարստահարեալ ազգաց, և մանաւանդ չայոց, էր մեծ պաշտպան և ջատագով, ուստի և մեք չայազդիք առանձինն երախտապարտպարտական ելքը լլայս մեծահռչակ անձին, որ իբրև ազգասէր չայ մը, այնպէս չայոց ազգին բարւոյն վրայ միշտ մոտածող և ազգին ներկայն, և առաւել ազգագայն լաւցունելու համար ոգւով չափ աշխատող եղած է թէ բանիւք և թէ զրով. ինչպէս որ յայտնի կը տեսնուի իր գրուածներուն մեծագոյն մասին մէջ, մանաւանդ անոնց որ իր կենաց վերջին տարիներուն մէջ զրուած են։